ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2015 թ. N 30-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Գուգարքի գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	կողմ	դեմ	ձեռնպահ
Թաթուլ Հարությունյան			
Սմբատ Գրիգորյան			
Քնարիկ Ալեքսանյան			
Համլետ Միկիչյան			
Մարիետա Սարգսյան			
Տիգրան Աշուղյան			
Ռոբերտ Ավետյան			
Գևորգ Սաքանյան			

Համայնքի ղեկավար՝ _____ Ա.Աշուղյան

2015թ. դեկտեմբերի 15
գ. Գուգարք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գուգարքի գյուղական համայնքի ավագանու
2015 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 30 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ ***յոթ հազար հինգ հարյուր*** դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***երեսուն հազար*** դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***հիսուն հազար*** դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***հիսուն հազար*** դրամ.

3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***յոթանասուն հազար*** դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

հազար հինգ հարյուր դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

երկու հազար հինգ հարյուր դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հինգ հազար դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ***երեք հազար*** դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ***երկու հազար*** դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) [illegible]ցօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ ***հիսուն*** դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ***հարյուր հիսուն հազար*** դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ***երեսուն հազար*** դրամ

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ ***երեք հազար*** դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ ***հինգ հարյուր*** դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել ***հիսուն հազար դրամ***:
7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ ***հիսուն հազար*** դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ***հարյուր հազար*** դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ ***երկու հարյուր հազար*** դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ ***մեկ միլիոն*** դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ ***չորս հարյուր հազար*** դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ ***հարյուր հազար*** դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) [illegible]ոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ***երկու հազար*** դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ***երեք հազար հինգ հարյուր*** դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ ***հազար հինգ հարյուր*** դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ ***յոթ հարյուր*** դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ***հինգ հարյուր*** դրամ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ ***վաթսուն հազար*** դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հինգ հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝

հինգ հազար դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ ***հինգ հազար*** դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ ***հինգ հազար*** դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից համայնքի վարչական տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝

ա. մեկ կամ երկու անդամից բաղկացած ընտանիքներից՝ *ամսեկան երեք հարյուր դրամ*

բ. երկուսից ավելի անդամներից բաղկացած ընտանիքներից՝ *ամսեկան չորս հարյուր դրամ.*

15. Մանկապարտեզ հաճախող երեխաների համար ծնողական վճար՝ *ամսեկան երկու հազար դրամ մեկ երեխայի համար:*

Համայնքի ղեկավար՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

15 դեկտեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 31-Ա

15 դեկտեմբերի 2015

ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 28 հոդվածը և Աշխատանքային օրենսգրքի 111հոդվածը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>,ՀՀ 16-րդ հոդվածի 26 կետով՝

1. Հաստատել Գուգարքի գյուղապետարանի և ենթակա հիմնարկների՝ *մարզադպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, «Գուգարքի շիրմատուն» հիմնարկ,* աշխատակիցների 2016թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1-6 հավելվածների:

2. Սույն որոշման առաջին կետն ուժի մեջ է մտնում 2016թվականի հունվարի 1-ից:

3. Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Գուգարք համայնքի ավագանու 2015թվականի հուլիսի 7-ի N 22-Ա՝ <<Գուգարքի գյուղապետարանի աշխատակազմի և ենթակա հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> որոշումը :

	կողմ	դեմ	ձեռնպահ
Թաթուլ Հարությունյան			
Սմբատ Հակոբյան			
Քնարիկ Ալեքսանյան			
Համլետ [illegible]յան			
Մարիետա Սարգսյան			
Տիգրան Աշուղյան			
Ռոբերտ Ավետյան			
Գևորգ Սաքանյան			

Գուգարքի գյուղապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

Հավելված 1
Գուգարքի գյուղական համայնքի ավագանու
2015թ. N 31-Ա որոշման, 15.12.2015

Գուգարքի գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. աշխատակիցների թվաքանակը՝ 20
2. աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքայի ն միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	270000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	200000
Գյուղապետի օգնական	1	130000
Աշխատակազմի քարտուղար	1	190000
Գլխավոր մասնագետ	2	170000
Առաջաս մասնագետ-հաշվապահ	1	160000
Առաջատար մասնագետ	1	160000
Առաջին կարգի մասնագետ-գանձապահ	1	130000
Առաջին կարգի մասնագետ-ֆինանսիստ	1	130000
Առաջին կարգի մասնագետ	3	130000
Երկրորդ կարգի մասնագետ	2	120000
Քարտուղարուհի	1	115000
Վարորդ	1	115000
Պահակ	1	72760
Տեխնիկ.աշխատող	1	72760
Բանվոր	1	72760

Գուգարք համայնքի ղեկավար Ա.Աշուղյան

Հավելված 3
Հաստատված
Գուգարք համայնքի ավագանու
15.12. 2015թ. թիվ 31 որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
2016թ.
Մարզադպրոց

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիք ային միավորներ (դրույք)	Ամսեկան պաշտոնական դրույքը	Ամսական աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)	Տարեկան աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)
1	Տնօրեն	1	120000	120000	1440,0
2	Ուսմասվար	1	72760	72760	873,2
3	Մեթոդիստ	1	77910	77910	935,0
4	Հաշվապահ	1	72760	72760	873,2
5	Մարզիչ	2	72760	145520	1746,3
6	Բուժքույր	1	72760	72760	873,2
7	Մարզիչ	2	77910	155820	1870,0
8	Քարտուղարուհի	1	72760	72760	873,2
9	Հանդերձապահ	1	72760	72760	873,2
10	Տեխ. աշխատող	1	77910	77910	935,0
11	Դռնապահ	1	77910	77910	935,0
12	Պահակ	1	72760	72760	873,2
	Ընդամենը	**14**	940960	**1091630**	**13100,5**

Գուգարքի գյուղապետ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

Հավելված 2
Հաստատված
Գուգարք համայնքի ավագանու
15.12.2015թ. թիվ 31 որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

2016թ.

Մանկապարտեզ

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորներ (դրույք)	Ամսական աշխատավարձի ֆոնդը	Տարեկան աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)
1	Տնօրեն	1	110000	1320,0
2	Դաստիարակ	0,84	90000	1080,0
3	Բուժքույր	1	72760	873,2
4	Դաստիարակ	0,84	90000	1080,0
5	Դաստիարակ	0,84	90000	1080,0
6	Երաժշտ, դաստիարակ	0,5	72760	873,2
7	Տնտեսվար գործավար	1	77910	935,0
8	Հաշվապահ (հաշվետար գանձապահ)	1	77910	935,0
9	Ման լվացող (խոհարարի օգն., օժ. բանվոր)	1	77910	935,0
10	Խոհարար	1	72760	873,2
11	Դաստիարակի օգնական	1	72760	873,2
12	Պահակ գիշերային	1	72760	873,2
13	Դաստիարակի օգնական	1	72760	873,2
14	Պարի դաստիրարակ	0,25	45000	540,0
15	Դռնապահ	1	72760	873,2
	Ընդամենը	15	1168050	14017,4

Գուգարքի գյուղապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

Հավելված 4
Հաստատված
Գուգարք համայնքի ավագանու
15.12. 2015թ. թիվ 31 որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
2016թ.
Մշակույթի տուն

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքաայ ին միավորներ (դրույք)	Ամսական պաշտոնական դրույքը	Ամսական աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)	Տարեկան աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)
1	Տնօրեն	1	110000	110000	1320,0
2	Հաշվապահ	1	72760	72760	873,2
3	Խմբավար	2	72760	145520	1746,3
4	Խմբավար	2	77910	155820	1870.0
5	Պահակ	1	72760	72760	873,2
6	Տնտեսվար	1	72760	72760	873,2
7	Տեխ. աշխատող	1	72760	72760	873,2
	Ընդամենը	9	551710	702380	8429,1

Գուգարքի գյուղապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

Հավելված 5
Հաստատված
Գուգարք համայնքի ավագանու
15.12. 2015թ. թիվ 31 որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
2016թ.
Գրադարան

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքաքանակը միավորներ (դրույք)	Ամսական պաշտոնական դրույքը	Ամսական աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)	Տարեկան աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)
1	Տնօրեն	1	110000	110000	1320,0
2	Հաշվապահ	1	72760	72760	873,2
3	Ավագ գրադարանավար	1	72760	72760	873,2
4	Ավագ գրադարանավար	1	72760	72760	873,2
5	Գրադարանավար	1	77910	77910	935,0
	Ընդամենը	5	406,190	406,190	4874,6

Գուգարքի գյուղապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

Հավելված 6
Հաստատված
Գուգարք համայնքի ավագանու
15.12.2015թ. թիվ 31 որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

2016թ.

Շիրմատուն

ՀՀ	Պաշտոնի անվանումը	Հաստիք աային միավորներ (դրույք)	Ամսական պաշտոնական դրույքը	Ամսական աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)	Տարեկան աշխատավարձի ֆոնդը (հազ. դրամ)
1	Տնօրեն	1	110000	110000	1320,0
2	Հաշվապահ	1	72760	72760	873,2
3	Պահակ	1	72760	72760	873,2
4	Բանվոր	1	72760	72760	873,2
	Ընդամենը	4	328280	328280	3939,6

Գուգարքի գյուղապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 32 -Ն

15 դեկտեմբերի 2015

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 3-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 4-րդ կետով `

Ավագանին որոշում է.

Հաստատել Գուգարք համայնքի 2016 թվականի բյուջեն՝ ըստ հավելվածի:

	կողմ	դեմ	ձեռնպահ
Թաթուլ Հարությունյան			
Սմբատ Հակոբյան			
Քնարիկ Ալեքսանյան			
Համլետ Միկիչյան			
Տիգրան Աշուղյան			
Մարիետա Սարգսյան			
Ռոբերտ Ավետյան			
Գևորգ Սաքանյան			

Գուգարքի գյուղապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 33

15 դեկտեմբերի 2015

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 29 կետը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 187 հոդվածը՝

ավագանին որոշում է թույլատրել Գուգարքի 14 փողոցի 60/2 հասցեի 792 քառ.մետր տարածքով շինությունը (կադաստրային ծածկագիր՝ 06-031-0222-0011-2) նվիրատվության պայմանագրով տրամադրել Հովհաննես Մարտիրոսյանի թոռանը՝ Տիգրան Մարտիրոսյանին:

	կողմ	դեմ	ձեռնպահ
Թաթուլ Հարությունյան			
Սմբատ Հակոբյան			
Քնարիկ Ալեքսանյան			
Համլետ Միկիչյան			
Մարիետա Սարգսյան			
Տիգրան Աշուղյան			
Ռոբերտ Ավետյան			
Գևորգ Սաքանյան			

Գուգարք համայնքի ղեկավար՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ